2185ա

№ 915

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

# ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

1898-1899

ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ

ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Հաստատուած և վաւերացուած Ամենայն

ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

1899

ԹԱՒՐԻԶ

Տպարան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

Ատրպատականի Հայուհեաց
ԴԱՎՐԷԺ
Բարեգ. ընկերութեան

13428

13428

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## 1898-1899 տարուայ

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Վարչութիւնս իւր պաշտօնավարութեան միամեայ շրջանը լրացրած լինելով՝ պարտք է համարում ներկայիս մի ամփոփ տեղեկութիւն հաղորդել յարգելի հայ հասարակութեան:

Վարչութիւնս առանձին գոհունակութեամբ պատիւ ունի յայտարարելու, որ յաջողել է իւրան ներկայ տարեշրջանում ընդարձակել իւր գործունէութեան ասպարէզը — շնորհիւ բարեգործ ազգակայինների բարոյական և նիւթական քաջալերութեան և ընկերութեանս Ըգնիւ անդամուհիների մասնաւոր ջանքերի:

Կատարելապէս համոզուած լինելով, որ Գաւառներում տիրող խեղճութեան և տառապանքների գլխաւոր պատճառներից մէկն է և տգիտութիւնը, Վարչութիւնս որոշեց իւր կարողութեան չափով նպաստել կրթական գործի յառաջադիմութեանը. ուստի, ըստ խնդրանաց պարոնայք Փանուէլեան եղբայրների, յանձն առաւ մինչև հինգ տարի տարեկան Թուման (200 ղրան) նպաստ տալ Մուժամբարի նորահաստատ դպրոցին: Միևնոյն նպաստով 500 ղր. նուիրեց Մարաղայի նորակառոյց դպրոցի շինութեանը ըստ խնդրանաց նոյն դպրոցի պատուարժան հոգաբարձութեան:

Վարչութիւնս չկարողանալով անտարբեր գտնուել դէպի Ուրմիի Թշուառ և աղէտ գաւառացիների աննախանձելի վիճակը, մանաւանդ որ այս վիճակի տևողականութիւնը կարող էր նոյա առաջնորդել դէպի բարոյական անկումը, բաց արաւ այն գաւա-

ու Հայաշտա Գեւորգուրայ գիւղում մի դպրոց՝ հոգալով նորա ուսուցչի եւ այլ դասական պիտոյքների ծախքերը Արժանապատիւ Տէր Ղեւոնդ քահանայ Շաղոյեանի վերահսկողութեան ներքոյ:

Գաղթականների խնամատարութիւնը նոյնպէս Վարչութեանս ուշադրութիւնից չէ վրիպել. առ այս 500 ղրան. նուէրի հետ երկսը յայտնել է Թեմիս առաջնորդ Գեր. Սահակ եպիսկոպոս Այվազեանին իւր պատրաստակամութիւնը այդ տարագիրներին նպաստելու եւ իւր ձեռքով նոցա խնամելու գործում:

Ինչ չէին նեղում եւ տեղացի թշուառները տիրող թանկութեան պատճառով, ուստի վարչութիւնս բաժանեց 800 ղրանի մի գումար 20 չքաւոր ընտանիքների՝ նոցա վիճակը մասամբ թեթեւացնելու համար: Հարկ եղած դէպքում դարձեալ չպիտի խնայէ իւր օգնութիւնը այս կարգի չքաւորներին:

Վարչութիւնս որոշել եւ արդէն իսկ ձեռնարկել է Արամեան եւ Ս. Աննայեան երկսեռ դպրոցների չքաւոր սաներից 10-ին հագուստ եւ դասական առարկաներ հայթհայթել. նաեւ առաջիկայ ուսումնական տարուց սկսած Ս. Աննայեան դպրոցում 3 որբեւայրուհիներ պահել՝ հագուստի եւ դասական պիտոյքի հետ վճարելով եւ նոցա դպրոցական թոշակը:

Որպէսզի գաղթական քոյրերն ու եղբայրները հարկ եղած խնամքն ու սփոփանքն ստանալուց յետոյ կարողանան հեռու մնալ մուրացկանութեան անարգ սովորութիւնից՝ Վարչութիւնս հիմնեց Թաւրիզում մի Արհեստանոց-Գործարան ընտանի տարազագործութիւնների վերաբերող, ուր յարմար պարապմունք պիտի գտնեն գաղթական կանայք, աղջիկներ եւ տղամարդիկ եւ ըստ իւրեանց աշխատութեան վարձատրութիւն պիտի ստանան:

Վարչութիւնս յոյս ունի, որ այս նորահաստատ գործարանը օգտակար պիտի լինի նաեւ տեղացիների համար, իւր հետ երկրիս մէջ մի նոր արհեստ մտցնելով:

Վարչութիւնս արդէն գրել է ազգիս Վեհափառ Հայրապետին, Հայրիկին եւ խնդրել է Նորին Օծութեան օրհնու-



թիւնն ու խորհուրդները եւ վստահ է, որ ինչպէս Նորին Վեհափառութիւնը, նոյնպէս եւ Բարեգործ Ազգայինները չպիտի խնայեն իւրեանց աջակցութիւնն ու օժանդակութիւնը, որով կարելի կը լինի այնանման արդիւնաւէտ հիմնարկութիւններ հաստատել եւ գաւառներում՝ սովորեցնելով նոցա արհեստ եւ ըստ կարելոյն նուազեցնել պանդուխտների թիւը:

Վարչութիւնս նոյն եռանդով յառաջ է տանում չորս տարուց ի վեր գոյութիւն ունեցող Կոյր ու Համր Արհեստանոցն ու Մանկապարտէզը ղեկավարութեամբ կովկասեցի Օր. Մ. Պետրոսեանի, որ վարում է նոյն պաշտօնը հաստատութեանցս հիմնուելուց ի վեր:

Արհեստանոցում ու Մանկապարտէզում սովորում են 20 ձրիավարժ սաներ:

---

Վարչութիւնս խորին շնորհակալութեամբ ստացել է այս տարեշրջանում հետեւեալ նուէրները.

Գերապատիւ Արիստակէս Արք-Եպիսկոպոս Սեդրակեանից Աստրախանի բարեգործ Տիկնանց շրջանում հանգանակուած 557 րուբլի.

Յամեստափայլ Տիկին Շուշանիկ Տէր Մարգարեանից (Բագու) 120 րուբլի, որ եւ ընդունեցաւ ընկերութեանս մշտնջենական Անդամուհիների թւում.

Յամեստ. Տիկ. Զարմանդուխտ Մելիք-Մինասեանից (Պարիզ) 100 ղրան.

Մեծ. պ. Աղեքսանդր Մելիք-Ազարեանից (Թիֆլիս) 1000 ղր.
„ „ Ստեփան Տէր Օհանեանից (Բագու) 1000 „

Վերոյիշեալ պարոնները ամեն տարի իրանց առատ նուէրներով չեն խնայել քաջալերել ընկերութեանս.

Մեծ. պ. Առաքել Ծատուրեանից (Մոսկուա) 500 րուբլի.
„ „ Առաքել Աֆրիկեանից (Թաւրիզ) 500 ղրան եւ 16

հաս վիճակախաղի տոմսակ, որից շահել է 45 ղռան.
Մեծ. պ. Գովլաթ Յովհաննեանից (Ռոստով) 100 րուբլի.
„ „ Մովսէս Մհտի. Անանեանից (Գոնճէլէ) 20 րուբլի.
„ „ Նիկոլա Ալեքսանեանի ձեռքով Աստարայում հանգանակուած 60 րուբլի.
Գերասիմեան Ալեքսան խան Գորոյեանից (Թաւրէզ) 250 ղր.
„ „ Զաֆար սալթանէ բէկլարբէկուց (Թաւրէզ) 100 ղ.
Մեծապատ. պ. Աւետիք Մանուէլեանից 10 օրինակ «Խոլանդայի դաշտը» (Թիֆլիզ)
Վարչութեան անդամուհիների մէկի կողմից 9 ձեռք հագուստ Մանկապարտէզի չքաւոր սաներին:

Վարչութիւնս բարոյական պարտք է համարում յայտնել իւր շնորհակալութիւնը պ. Մելքոն Շահբազեանին, որ հաճեցաւ ութ ամիս ձրիապէս վարել ընկերութեան քարտուղարութեան պաշտօնը: Նաև Թաւրիզի երիտասարդութեան, որ իւր բարոյական աջակցութեամբ միշտ օգնել և քաջալերել է Վարչութեանս:

Վարչութիւնս լիայոյս է, որ ապագայում իւր գործունէութեան շրջանը պիտի յաջողէ ընդարձակել և իրագործել իւր բարենպատակ ծրագիրը շնորհիւ յարգելի Հայ հասարակութեան բարոյական և նիւթական քաջալերութեան:

Հաշիւների և գործառնութեանց մանրամասնութիւնը իւրաքանչիւր ոք կարող է ստանալ ընկերութեան քարտուղարից:

# ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Եգիպտականի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան

1898 — 1899

Տարեշրջանի

## ՄՈՒՏՔ

| | ղուան | կուր. | ղուան | կուր. |
|---|---|---|---|---|
| 1897 — 98 Տարուայ տոկոսաբեր դրամագլուխ . . . . — | — | — | 11039 | 75 |
| Մանկապարտիզի մանկանց տարեկան թոշակ . . . . — | 605 | | | |
| Արհ. աշակերտուհիների տար. թոշակ | 1150 | | | |
| Արհեստանոցում կարուածների վարձ | 378 | 10 | | |
| Արհեստանոցից ծախուած նիւթեր — | 319 | 62 ½ | | |
| Ստացուած նուէրներ . . — | 10368 | 42 ½ | | |
| Ստացուած տոկոսներ . . — | 1474 | 80 ½ | | |
| Վիճակախաղից . . . — | 1442 | — | | |
| Ներկայացումներից . . — | 3711 | — | | |
| Անդամավճարների մնացորդը . — | 535 | — | 19983 | 95 ½ |
| | | | 31023 | 70 ½ |
| 1899 Մարտ 1. Սնդուկում պատրաստ | 864 | 27 ½ | | |
| Զանազան անձանց տոկոսով տուած | 20851 | 53 | 21715 | 80 ½ |

## ԵԼՔ

| | ղուան | կուր. | ղուան | կուր. |
|---|---|---|---|---|
| Զանազան ծախսեր - Վառելափայտ, գնուած մանր իրեր, տպագրութեան, փոստի, մշակութեան և այլն — | 1683 | 45 | | |
| Արհեստանոցի համար գնած նիւթեր | 511 | 50 | | |
| Տուած ռոճիկներ . . — | 4365 | 45 | | |
| Տուած նպաստներ - դպրոցներին, գաղթականներին և չքաւորներին — | 2747 | 50 | | |
| Պատրաստ դրամագլուխ . — | 21715 | 80 ½ | | |
| | | | 31023 | 70 ½ |

Ընկերութեանս հասցէն

«Վարչութիւն Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան».

Société de Bienfaisence des dames Arméniennes d'Azerbaydjan Tauris ( Perse )

*Азербайджанское Женское Благотворительное Общество.* **Въ Тавризъ (Персія)**

Վարչութեան Անդամուհիներ

| | |
|---|---|
| Նախագահ | Հեղինէ Լօրժ. |
| փոխ. նախագահ | Մարիամ Նազարբէկեան |
| Գանձապահ | Փեփրոնէ Ներունեան |
| Խորհրդականներ | Փեփրոնէ Յովհաննեան<br>Մանիա Գրիգորեան<br>Մաշինկա Շահնազարեան<br>Շուշանիկ Տէր Ղազարեան |

1899. Մարտ 1.
Թաւրիզ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011895